

Ամբաս Բիւրաս
 Խմբագրութիւն «Փիիկնիկ» Բ
 Աղեփասնորիա



S. Burat
 Rédaction «PUNIG»
 Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՅՄԱՆ

Ղր. 25
 ՏԱՐԵԿԱՆ... 45
 ՎԵՑԱՄՍԵԱՅ 25

Ֆր. 15
 ՏԱՐԵԿԱՆ... 15
 ՎԵՑԱՄՍԵԱՅ 8

ՓԻԻԿՆԻԿ

ԲՍԺՆԵԳԻԼԸ
 ԿԱՆԵՒԿ Է
 Ձեռագիր եւ չդարձուի

ԿՈՎԿԱՍ
 ՏՅԵԿԱՆ ԲՈՂ. 6
 Ազդեր կ'ընդունին մասնաւոր պայմաններով.

Ար ծախուի ԿԷԿ զրուս ողջի

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

31 ՅՈՒՆՎԱՐ 1903

ԹԻԻ 24

ՊԱՏՐԻԱՐՔԸ ԶԱՐՆՈՒԱԾ

Օրվանեան Պատրիարք Ս. Մննդեան օրը, Գում Կարուի Մայր - Եկեղեցիին մէջ, երբ որ քարոզի միջոցին, կըսկսի խնամով թուել Սուլթանին կողմէն հայ ազգին շռայլուած անթիւ ու մեծամեծ բարիքները, և, սրտաբուխ մտքմանքներ ուզել առ Բարձեալն Աստուած Ն. Վ. կենաց արեւշատութեանը համար, որպէս զի երախտագէտ հայ ազգը միշտ արժանանայ վայելել կայսերական անսպառ շնորհները, ևն, ևն, ևն, յանկարծ չըսահարի գնդակ մը կընդունի ձախ ուտը: Վէրքը մահացու չէ, զարնողը կարճեցի Յակոբ Խաչիկեան, գեղազորական վարժարանի ուսանող մը, անմիջապէս կը ձերբակալուի եւ առաջին հարցաքննութեամբ կը յայտարարէ թէ ինք նպատակ ունէր սպաննելու Պատրիարքը, որովհետեւ սա ուզած էր աքսորել տալ զինք: Այս յայտարարութիւնը, շատ պարզ ու մեկին, ենթադրել կուտայ թէ սպաննութեան փորձին շարժառիթը՝ սոսկ անձնական

վրէժխնդրութիւնն է. սակայն Գումը, քաղաքական գոյն տալով դէպքին, մեծ թիւով ձերբակալուածներ սկսած է ընել Հայերէն: Պատրիարքարանը տանող բոլոր փողոցները պահապան ստիկաններ կը հսկեն. տիրող կարծիքն է թէ՛ այս գործին մէջ չ'ըզփութական գոմիթէի մը մատը չ'այ:

Աստիք են ահա՛ պոչական թըլթակիցներուն կողմէն եւրոպական կարեւոր թերթերուն մէջ հրատարակուած տեղեկութիւնները:

Խաչիկեան մը, անձնական վրիժառութիւն մը կամ գոմիթէի մը վճիռը գործադրելու համար Պատրիարքը կը փորձէ սպաննել. Օրմանեան հիմայ ողջ առողջ, տաքուկ ու փափուկ անկողնին մէջ ապաքինելու վրայ է, իսկ Խաչիկեանը, բանտին մէջ ս'վ գիտէ ինչ ահռելի տանջանքներու ենթարկուած է այս պահուն. ու մինչդէռ սակայն հարիւրաւոր հայեր, ս'վ գիտէքանի՛ քանի թշուառ զնտանիքի հայեր, 20 յարիւրէ մ'աւելի մանր չը տեսնուած ապա մեծապէս զուրկուած Պոսոյ բանտ կոչուած նկուղներուն մէջ,

պազ պազ ու մերկ քարերուն վրայ
նեառեաժ, Խաչիկեանի մը պիտանայ
բազղակիցներն են հիմայ, առանց ա-
նոր կամաւոր գործակիցներն ըլլալու .
մինչդեռ անդին, անոնց ընտանիքները
գողերու սարսափի մէջ, արիւն ար-
ցունք կուրան:

Ինչո՞ւ:

Վասնզի, —պիտի փաստեն ընակա-
նաբար մեր ազգային փրկիչները, —
Օրմանեան Պատրիարքը, զից տարի է
սր գիտակցօրէն կա՛մ անգիտակցօրէն
կը խորթի երլորդէն ու կը խորթ Ազ-
գը այս մարդը պարտելի դարձաւ ժո-
ղովուրդին, պատրիարքական քարձրու-
թիւնը նուազացուց, Պատրիարքարա-
նը վերածեց տեսակ մը Բ. Դրան, ի-
րենները թէց առաջ, Դրան հաւա-
տարիմ կարգ մը հեղա՛ ու պղծող կը-
ղերն'րու կուրծքը փակցնել տուաւ
չքանչաններ (°). դիւրեղն, գաւառ-
ներէն տեղացած բողոքներուն խուլ
մնաց, իւրիցեց հարստահարուածնե-
րուն ազազակները, ծաղրեց արտա-
սահմանի մնացորդ հայութեան միա-
միա դիմումները, կեղծ հրաժարական-
ներով շահագործեց իր նուիրական
պաշտօնը, քաղթէ քաղաք հայերուն
ազատ երթեկն արտօնող սուլթանա-
կան իրասէ մը ձեռք բերաւ ու այն-
պէս վերագործաւ իր գահը, տարի
մ'է որ այդ իրասէն կը մնայ մեռած
տաւ ու Օրմանեան Պատրիարքը դեռ
կը շարունակէ մնալ գահին վրայ, ուր
բազմեղէ առաջ երգումով ուխտած
էր հաւատարիմ մնալ Տէրութեան, Ազ-
գին ու Ազգ-Օրէնքին, այն է Սահ-
մանագրութեան, մինչդեռ ինք, ուխ-
տին առաջին մասը միայն ամուր բըռ-
նեց կեցաւ. Սուլթանին ու Սուլթանի
կամքին հաւատարիմ մնաց լոկ, աւելի
հաւատարիմ քան ելլալով թիկնապահ
մը, աւելի՛ հաճոյակատար քան Դրան
նախարար մը, նահանգի վաչի մը,
գաւառի միւրիսարրը մը, գաւառակի

գայնագու՛մ մը, գիւղի միւսիւր մը...:

Ո՛վ է սակայն պատասխանա՛ռուն:

Յաջող. թիւով սխտի պարզեմք
մեր տեսութիւնները:

ՇՐՋԱՆԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ

ՊԵՌԼԻՆԷՆ

Եզիպտահայոց ուշադրութիւնը կը
հրաւիրենիք այս շրջաբերականիկ պա-
րունակութեանը վրայ:

Մեծապատիւ Պարոն

Պատիւ ունինք Ձեզ խոնարհաբար
տեղեկացնելու, որ մենք գիտաւորու-
թիւն ունինք 1903 թ. ամառը Բեր-
լինում մի

ԼԱՅԱԿԱՅԱՆ

ՅՈՐՏԱԼԱՆՆԵՐ

կազմելու:

Մեր ձեռնարկութեան նպատակը
որ և է քաղաքական հիմունքից մի-
անգամայն զուրկ է: Մենք կամինք
Կերմանիս մայրաքաղաքում հայ ազ-
գի անցեալ և ներկայ կուլտուրան,
նորա նրութեան և հոգեոր արգաս-
եաց ընդհանուր պատկերը գերմանա-
կան հասարակութեանն ներկայացնել:
Մեր ցանկութիւնն է՝ դրդել գերմա-
նական դիտութիւնն աւելի մեծ աջ-
ուլթեամբ, քան մինչեւ այժմ, ուսում-
նասիրել հայ լեզուն և պատմութիւնն
և աւելի պարզ պատկերացնել մեզ
հայ ազգութիւնն: Ձեր ազգութեանն
խաղաղ կերպով ծառայել՝ այսինքն՝
Հայաստանի եւ Հայերի մասին լոկ
ճշմարտութիւնն հանդէս դնել՝ մեր
միակ ցանկութիւնն է: Թէ Ձեր ազգը
մի խաղաղ հոգեորապէս զարգացած և
վերին աստիճանի կուլտուրայի ընդու-
նակ ժողովուրդ է՝ յօդուտ գորա գեր-
մանացի և եւրոպական հասարակու-
թեան առջև համոզեցուցիչ ապացոյց-

ներ են բերելու նորա պիտանների պտուղները և նորա հոգեւոր կեանքի արդասիրը, հայ պատմութեան սկզբից մինչև մեր ներկան.

Յուցահանդիսի ծրագիրը հետևեալ բաժանմունքներից կ'ըստկանայ՝

1. Երկրի քերթը. ա) Հանքեր և մետաղներ. բ) Նափուայ. գ) Բամբակ. դ) Բուրդ. ե) Մետաքս. զ) Դինի և այլ խմիչք. է) Չոր միրգ. ը) Կաթնային սնանկութիւն. թ) Չինեղէն:

2. Արուեստ և Զեռագործ. ա) Գեղակար. բ) Ոստայնանկութիւն (կապերաններ և այլն). գ) Ոսկերչութիւն:

3. Հիւն և նոր Հայկական գեղարուեստ. ա) ձարտարութիւն և արձանագործութիւն. բ) Մոզաիկ. գ) նըկարչութիւն:

4. Ազգագրութիւն. ա) Ժողովրդի կեանքը, գործունէութիւնն, բնակարանն. բ) Զգեստը. գ) Հոգեւոր կեանքը՝ հեքեաթներ, վէպեր, երգեր և այլն:

5. Հայ հնութիւններ. ա) Իրաւներ. բ) Կնիքներ և այլն:

6. Իրականութիւն և մակոյ:

7. Հայկական Թատրոս (քեւի վերայ):

Իրտաւորութիւն կայ Յուցահանդիսի ժամանակ մի շարք դասախօսութիւններ Հայերի մասին կարգալու, որի համար հրաւիրելու ենք յայտնի գիտնականներ և ուսումնասէր ճանապարհորդներ. մեր ձեռնարկութիւնն ստուար հասարակութեան համար հետաքրքրական պէտք է անենք լուսաւոր պատկերներ և լուսանկարներ ցոյց տալով: Յոյս ունինք, Մեծապատիւ Պարոն, որ Դուք պատրաստ կը լինիք մեր այս ձեռնարկութեանն օգնել և թէ մենք Ձեր օժանդակութեան շնորհիւ մեր ծրագիրը իրագործել կը կարողանանք:

Իրամբ փոխադրելու է՝ BERLIN, DEUTSCHE BANK (Behrenstrasse), Herrn

DR. P. ROHRBACH und DR. B. CHALATIANZ.

Իսկ նամակների և այլն՝ DR. B. CHALATIANZ. und DR. F. FINCK, Berlin, Kantstrasse 94.

Հայ Թերթերում պարբերաբար հաշիւ ենք ներկայացնելու:

Շնորհակալութեամբ կընդունուին մեր ծրագրում յիշուած առարկաների նուէր:

Խորին յարգանքով

ԿՈՄԻՏԷ

Իր. Ֆ. Յնդրեան

Իրանագէտ

Իր. Աւստրուս

Deutsche Orient-Missionի Իրեկտոր:

Պրոֆ. Ռ. Պիշեղ

Սանսկրիտագէտ

Պրոֆ. Եղ. Մալեր

Պատմաբան

Նախագահ

Իր. Պ. Իորբախ

Պրոֆ. Կ. Գեղղևեր

Արևեստագէտ

Իր. Ռ. Անովենկերդ

Schiller-Թատրոնի Իրեկտոր

Պրոֆ. Ք. Բեռդիգեր

Ազգագրական Ընկ. Նախագահ:

Իր. Ն. Փիլևի

Լեզուագէտ և Հայագէտ

Քարտուղար

Բ. Խաչարեանց

Յուցահանդէսը պիտի փոխադրուի յաջորդաբար Բարից ու Լոնսրա:

Ք Ր Ո Ն Ի Կ

— Խնամակալութեան մէջ վերջերս փափագի պէս բան մը յայտնուած է էջ Անրանի զգուելի յօդուածին հերքումը տալու պաշտօնագէտ Եթէ ճիշդ է իմացամտիս, շիտակը

դարձեալ գովելի է, հակառակ շատ ու շատ ուշ մնալնուն: Սակայն, միև կողմէ — թէև չենք ուզեր հաւատալ — կը վախցուի թէ այդ հերքումը դիւրին դիւրին չը տրուի, առանց վսեմ: Աբրահամ Բաշա Բարթոլին բարձր հաճութեանը:

— Վահրամ Վ. Ազարեան, Երուսաղէմի Ս. Յակովբայ միաբանութեանէն, տիտղոսակիր քարոզիչ տեղիս Ս. Պօղոս Պետրոսի, ուր լոկ կը քահանայագործէր տարիներէ ի վեր, ալգ. սնտուկէն կանոնաւորապէս կ'ընդունէր ամսէ ամիս 60) զրուշ ողջի դումար մը: Վերջերս, Ա. Վազեան եպիսկոպոսին կրկնակի թախանձանքին միանալով Խնամակալութեան որոշումը, կը դադրի այդ դումարին վճարումը: Վարդապետը, սրտին ցաւէն հիւանդ, իր քրոջ բնակարանը կը քաշուի, ա. միսներով ոտք չը դներ եկեղեցին. կուգան կ'անցնին ամաւերջի տօնական մեծ օրերը, ու իր քրոջ տունը քաշուող վարդապետնիս չ'ենք տեսներ եկեղեցին գոնէ մէկ անգամ, թէև ոտքի վրայ էրկար տեղը իր այդ հիւանդութիւնը բնաւ արգելք չ'եղաւ իրեն պարթև հասակը ցուցնելու բոլոր տիքը վեց յարկենի փառաւոր շէնքին, որ ինքը, Վահրամ վարդապետ, տընկել տուաւ այս տարի Պապ-Սիսրայի կողմը, Թրանկայի գծին վրայ: Ս. Ծնունդին օրերուն, տեսանք Հայր Սուրբնիս Դասին մէջ, իր նախկին տեղը: Նոր բան մ'անցած դարձած էր անշուշտ:

Թէ ինչո՞վ շինեց այդ վեց յարկերը, որոնք տարին առ նուազն 250 ոսկի հասոյթ պիտի բերեն. թէ որի՞ համար շինեց և որի՞ անունին դարձուցան. թէ ինչո՞ւ տարիներով ստացաւ այդ ամսականը. թէ՞ ինչո՞ւ դադրեցուցին վճարումը. թէ ինչո՞ւ իր գոյքերը դուրս հանուեցան եկեղեցին շրջափակէն. թէ ի՞նչ անցաւ դարձաւ

վերջերս որ հայր սուրբնիս նախկին տեղը վերադարձաւ. թէ վաղն ալ ի՞նչ նորութիւն պիտի տեսնենք աշգեօք. թէ Երուսաղէմի վանքին պարզ միաբան, ո՞ր առաքինութեանը կամ ձիրքին շնորհովը կը վայելէ բարձր տեղի պաշտպանութիւն. թէ ուսկի՞ց այդ պաշտպանութիւնը, եւն, ևն. ահա՛ ո՛չ միայն տեղիս հասարակութիւնը, այլ նաև մեր ազգային ամբողջութիւնը շահագրգռող հարցումներ, որոնց պատասխանները յաշորդով պիտի տանք:

— Սիկիլիացի ֆահանսները Ս. Պապին ազերսագիր մը զրկած են ամուսնանալու արտօնութիւնը խնդրելու համար նորին Սրբաշնութեանէն:

Այս ազերսագիրը, Սիկիլիացի քահանայից ընկերակցութեան մը կողմէն այս երրորդ անգամն է որ կ'ուզուի Ս. Պապին ու կը մնայ առանց պատասխանի:

Ասոր համար է որ այս անգամ խնդրարկուները վճռած են տպել այդ ազերսագիրն ու տարածել բովանդակ Խտալիոյ մէջ: Վատիկանը մտահոգութեան մէջ ինկաւ. արտասովոր եղաւ տպաւորութիւնը սոյն հաւաքական դիմումին, մանաւանդ այն պահուն որ կաթոլիկներ ու կղերականներ խիստ շատ կը գրադին ամուսնալուծման հարցովը:

Կ'արժէ հոս արտագրել քանի մը տողեր յիշեալ ազերսագրէն.

«Մեր եկեղեցին ու իր Քահանայապետներն անգամ ասեմ մ'ընդունած են ամուսնութիւնը ֆահանայից համար:

«Երբ որ ժՁ. դարուն, Դեղնէի ժողովին մէջ վերակազմեցին եկեղեցական կարգապահութիւնն ու բարոյականը, պապերուն հրամանովը, ժողովին 24 դ նիսին մէջ վաւերացուցին կարոլիկ ֆահանային ամուսնութիւնը:

«Յոյներն ապաստեցան այս սեղմումին դէմ ու Վեհագոյն Քահանա-

յապէսը ընդհեց անոնց ամուսնութիւնը: . . . Արդ, ինչո՞ւ անոնց համար ԱՅՈՒՆԻ մեզի համար Ո՞՞: Չ՞ունի՞նք նոյն մարմինն ու նոյն արիւնը. չ՞ե՞նք որդիները նոյն Աստուծոյ: Պէ՛տք է ապաստաբի՞նք ուրեմն սսանալու համար ինչ որ արդէն Աստուած արտօնած է մեզի. . . »:

— Տիկին Գառնէ, պատուոյ լէգէօնի ասպետ անուանուած է Յունվար 15ին, Արևելքի մէջ Փրանսական ազգեցութեանը մատուցած ծառայութեանց համար: Նշանաւոր հանդիսացած է իր արիութեամբ ու անձնուիրութեամբ 1895ի Սեբաստիոյ դէպքերուն ատենը:

— «Բէսքըր շոյս», որ յաճախ կը ներշնչուի արտաքին գործերու նախարարութենէն, կը պնդէ վերջերս թէ՛ Լամատորֆ Կոմսը հետեւեալ դիրքին մէջ դրած է Պուլղար կառավարութիւնը. կա՛մ Ռուսիոյ ու Աւստրիոյ յանձնել ի նպաստ Մակեդոնիոյ միջամտելու հոգը, և հետեւաբար, կապը խզել գօժիթէներուն հետ. և կամ, ինք ալ նետուիլ ընդհանուր պատերազմի մը վտանգին մէջ:

Չը գիտցուիր թէ Պուլկարիան ի՞նչ պիտի ընէ գարնան և թէ արդեօք, հետեւելով Յունաստանին օրինակին, պիտի պատերազմի բռնուի՞ Սուլթանին հետ: Ամեն պարագայի մէջ, Պուլղարիոյ զինուորական հանդերձանքները կը շարունակեն անշշուկ, բայց առանց ընդհատուելու:

— Լ'էօրօքէէնի վերջին թիւերուն մէջ Մակեդոնիոյ հարցը շատ մը սինակներ գրաւած է: Քաղաքական լուրերու շարքին մէջ հետեւեալը կը կարդանք.

Նիս լաւատեսակ օրջանակներուն մէջ կը հաւաստուի որ եթէ Եփոթութիւնները դեռ շարունակեն, Տէրութիւնները զինուորական կարեւոր առաւելութիւն մը պիտի յանձնեն գարնան Իսպիային ու Ռումանիային:

Այս պաշտօնին վրայ մօտեւ պիտի վիճին Վիլիելմ ու Ֆրանցուա Ժօզէֆ կայսրերն ու Ռումանիոյ Կարոլ քաղաւորը, սեսակցութեան մը մէջ, որ տեղի պիտի ունենայ Ապաձիա»:

Իարձեալ «էօրօքէէն»ին մէջ, երկայն յօդուածով մը Պն. Անասօյ Լըռուա Պօլիյէօ, սրտաշարժ կոչ մ'ուղղելով խաղաղութեան բարեկամներուն, կը հարցընէ թէ Ի՛նչպէս Տէրութիւնները կրնան միջամտել Արեւելքի:

Կը դատապարտէ Եւրոպային անզգայ լուրսիւնը շարդերուն հանդէպ, որոնք դեռ կը ներկեն Հայաստանն ու Մակեդոնիան. կը ծաղրէ դիւանագիտութեան ապարդիւն դիմումները, որոնք աւելի՛ կը շփացընեն երկտրդի չարաշուք Հիւրը: Արդեօք, կը գոչէ, Պերլինի Իաշնագիրը ստորագրող վեց Մեծ Տէրութիւնները տկարացա՞ն ա՛յն աստիճան որ չ'կարենան Դրան յարգել տալ այդ Իաշնագիրը, ինչո՞ւ կը մոռնան Պեռլինի մէջ իրենց ստանձնած պարտքերը, ինչո՞ւ չ'են կրնար ըմբռնել թէ՛ իրենց ամենուն շահերը կապ ունին Արևելքի խաղաղութեան հետ, որ եթէ դեռ այսպէս շարունակէ խանգարուիլ, հայկական ու մակեդոնական դէպքերովը, 1903 ի գարնան շա՛տ հաւանական է որ այն յանգի եւրոպական ընդհանուր պատերազմի մը:

Պրն Պօլիյէօ, Մակեդոնիոյ ներկայ վիճակը յարկնման կը գտնէ 1876 ի ապստամբութեան նախընթաց օրը Պօսնիա - Հէրձէկովինի ունեցած վիճակին: Կը յիշատակէ Իզնաթիէֆ զօրավարին հայ պատուիրակներու ուղղած այս խօսքը. «Մենք ջրհանկիրներ ենք, հրդեհ մը պէտք է մեզի որ միջամտենք»: Ու կը յարէ. Եւրոպան ուրեմն պէտք է բոլոր Պալզաններուն բռնկելուն սպասէ:

Սուլթանին սուտերը շատ բռնե-

ցինք, կ'ըսէ, առատ առատ խոստու-
ներ տուաւ, որոնց արժէքը շատ լաւ
հասկցուած է եփրասին ահուճքէն
մինչև կիլիկիոյ կիրճերը:

Արևելքի զրկուածներուն դատը՝
միջազգային հանդամանք մ'առած է,
կ'ըսէ, Պերլինի դաշնագրին սւտովը, ս-
րուն, 23, 44, և 61րդ յօդուածներուն
գործադրութեամբը միայն կարելի է
խաղաղութիւնը վերահաստատել Արե-
ւելքի մէջ: Բայց որովհետև, Արևել-
քի զրկուած ազգերը, որոնց բազդին
բարեխաւութիւնը կը փափագուի, տէ-
րութիւն մը չ'են, միջազգային օրէն-
քին ու իրաւունքին առջև ո՛ր և է սե-
փական գոյութիւն չ'ունին, հետևա-
բար, հսկառակ իրենց անվիճելի իրա-
ւունքին ու ստացած տիրոջուն, հան-
դամանք չ'ունին պաշտպանելու իրենց
դատը: Արդ, ո՞վ պիտի պաշտպանէ:

Պերլինի դաշնագիրը ստորագրող
Տէրութիւնները, կը պատասխանէ:

Ինչո՞վ, կը հարցնէ. Միջազգա-
յին Դեսպանախորհուրդի մը գումար-
ով, կը պատասխանէ:

Եթէ այդ գումարումը կարելի չէ,
կ'ըսէ, թո՛ղ դիմուի իրաւարարու-
թեան (arbitrage), իբրև ամենապարզ
միջոցի, եթէ կ'ուզուի արգիլել պա-
տերազմը, որ անխուսափելի է:

Ու եթէ իրաւարարութեան վճիռը
տարակուսական չըլլայ, այսինքն, եթէ
բոլոր մեծ տէրութիւնները միաձայ-
նութեամբ վճուեն, կը մնայ այն ատեն
գործադրել տալ զայն, հո՞ն է դժուա-
րութիւնը, կ'ըսէ ու կը վերջացնէ հե-
տևեալ տողերով.

«Բայց, Արեւելքի մէջ հիմնական
առկախ գործերուն համար, գործա-
րութեան եղանակը ցոյց տրուած է նոյն-
իսկ Պերլինի դաշնագրին մէջ. Եւրո-
պային միջամտութիւնն ու հսկողու-
թիւնը: Ու պէտք է լա՛ւ համոզուինք,
ո՛ր կողմ ալ որ դարձրնեն Հայկական
խնդիրը կամ Մակեդոնականը, ուրիշ

միջոցով կարելի պիտի չ'ըլլայ լու-
ծումի մը յանգիլ եթէ ոչ Եւրոպային
հսկողութեամբն ու վերահսկողութեամբը,
Պերլինի դաշնագրին համաձայն: Մնա-
ցածը բոլորովին անօգուտ է: Այս բա-
նը կարծես թէ կը մտնան Տէրութիւն-
ները, մինչեւիսկ այն պահուն որ,
Ռուսիային հետ, Մակեդոնիոյ համար
Սուրբանէն բարեհարգումներ կը պա-
հանջեն: Պերլինի դաշնագրին գործա-
դրութեանը վրայ չը համարձակելով
պնդել, Ռուսիան ու Տէրութիւնները կը
եղոյն համբէն:

Աստուհ, անգամ մըն ալ պիտի
խաբուած ըլլան Երլսթօ Բէօսկի վար-
պետին նենգամիտ նմարհներէն, Արեւելքի
դժբաղդութեան համար ու վստահելով
Եւրոպական խաղաղութիւնը:»

— Պ. Անաթոյ Պոլիցիօ վերջերս բա-
նախօսութիւն մ'ըրաւ ընկերային ուս-
մանց Ռուսական դպրոցին բայման ա-
ռիթովը:

Այդ բանախօսութեան մէջէն կը
քաղենք հետևեալը, որ մեզի կը վե-
րաբերի.

«Ռուսական երկրին միւս ծայրը,
Կովկասին հարաւակողմը, ուրիշ տա-
ռապող ա՛յդ մը կայ, որ պէտք է
ամենքէն աւելի սիրելի ըլլայ մեզի,
որովհետև տառապեցաւ աւելի քան
ո՛չ ոք. մարտիրոս ազգ մը, որուն
բնայնջումը կը սպառնան իր թշնա-
միներուն ոտն ու Եւրոպային շրջումը:

«Կը հասկնաք թէ Հայերը կ'ուզեմ
ըսել, որոնցմէ շատերը դրուած են
այսօր ռուսական մականին տակ: Այս
վաղեմի ազգը, գրեթէ Ս.սիոյ միակ
քրիստոնեան, դարէ մ'աւելի կայ,
Ռուսիոյ բարեացակամութեան արժա-
նացած է. ձեր կառավարութիւնը Սան
Ստեփանօյի դաշնագրին մէջ անոր վը-
րայ խորհելու և Պերլինի դաշնագրին
մէջ զանի Եւրոպային ուշադրութեան
յանձնելու արժանիքն ունեցաւ: Զոր-
գերէն ի վեր, իր հոգին վրայ, քրքա-

հայերուն ընծայեց ապաստան մը թե-
րեւս խիստ անկայուն: Բայց, թէև շատ
անգամներ իր հովանին տարածած ըլ-
լայ այս դժբաղդ ժողովուրդին վրայ,
կրնա՞նք ըսել թէ Ռուսիան — որ դեռ
քիչ մ'առաջ ինքզինք անոր բնական
պաշտպանը կրնծայէր — բաւական բան
ըրած ըլլայ անոր համար: Ռուսիա ու
ձրանսա, այս քրիստոնէից հանդէպ
կատարեցի՞նք քրիստոնեայ մեծ աէ-
րութեանց մեր պարտքը: Ու քանի որ
Ռուսիան ու ձրանսան միանգամայն կը
պարծենան թէ պաշտօն մ'ունին Արե-
ւելքի մէջ, չ'էի՞ն կրնար համաձայնիլ
ազատելու համար բեկորները սոյն
ճնշուած ազգին, վերջապէս պահան-
ջելով Գոնէն Պերլինի Դաշնագրին
դորձադրութիւնը:

— Մակեդոնական յեղափոխական
երկու անշատ գոմթէները, այն է Պո-
րիս Սարաֆօֆինն ու Միքայէլովսկի
Չօնչէֆինը, սկզբունքով ա՛լ միացած կը
համարուին, յառաջիկայ դարնան պայ-
թելիք ապստամբութեան տոխթովը:
Ոմանք Ապրիլի սկիզբը, ուրիշներ փե-
տըրվարին վերջերը պիտի պայթի կ'ը-
սեն ընդհ. ապստամբութիւնը: Սակայն
գոմթէներուն այս ճուլումը կատար-
ուած իրողութիւն պիտի ըլլայ լոկ
Մակեդոնական Մեծ Գօնկրէին, որ
մօտերս պիտի գումարուի Սօֆիա:

Քաղաքական չըջանականերու մէջ
կը խօսուի թէ՛ Մակեդոնիոյ մէջ ա-
պրտամբութեան պարագային՝ Պուլ-
կարիոյ համար անկարելի պիտի ըլլայ
միակ պարզ հանդիսատես մը, առանց
օգնութեան վազելու իր եղբայրնե-
րուն: Ու է նախարարութիւն որ այս-
պէս չը վարուի, անմիջապէս պիտի
տապալի, կ'ըսեն, ու, մինչևիսկ իշ-
խանին կեանքը պիտի վտանգուի: Այս
խօսքերը հասցուցած են նաև Աւստրո-
Հունգարական կառավարութեան ա-
կանջը:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Քաղաքիս փորձ մանկաբարձներէն
Տիկին Էրպիս Կօշկարեան, արուեստին
մէջ ստացած իր փորձառութեամբը
յաջողեցաւ անցեալներն անվտանգ
ազատել մօրաբրոջօ ազլիկը տղայա-
բերութենէ զոր Գոլսոյ անուանի բժիշկ-
ներէն ոմանք մահացու և վտանգաւոր
յայտարարած էին:

Այս առթիւ պարտք կը զգամ
յիշեալ Մանկաբարձ Տիկնոյ հրապա-
րակաւ յայտնել իմ և պարագայիցս
խօրին շնորհակալութեան հետ ան-
կեղծ խնդակցութիւններս:

ՍԵՂՐԱԿ ԴԱՂԱԶԵԱՆ

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Քննասիրական ամսաթերթ. Տէր,
և Տնօրէն — Խմբագիր. Ա. ՊԱՆՆԱՆ,
բաժնեգինը կանխիկ, 5, 3 կամ 2ֆր.
տարեկանով:

Այս թերթը լոյս տեսած է տե-
ղիս «ԱՐԱՔՍ» տպարանէն.

Յաջողութիւն և յարատեւութիւն...:

ՔԱՂԱՔԱՏԻ

Աճերիկեան շաբաթաթերթ. Խմբ.
Տնօր. Հ. ԷԿԻՆՆԱՆ. բաժնեգինը կան-
խիկ. տարեկան 10 ֆր. հասցէն.

To the Editor of

The Citizen
Fresno, Cal.

P. O. Box 1224
Կանոնաւորապէս կը ստանանք այս նոր
թերթը, սկսեալ 14 թգ. թիւէն:

Յաջողութիւն և յարատեւութիւն:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Յ. Գանիրե. շնորհակալ եմ. Բ. վեց-
ամսեան կը պարտիք:

«ԱՐԱՔՍ»

Հայկական տպարանը թէ՛
Հայերէն, թէ՛ գաղղիերէն և
թէ՛ ուրիշ լեզուներով ամեն
տեսակ տպագրական գործեր
կը կատարէ մեծ խնամով եւ,
ինչ որ նուազ կարեւոր չէ:
ԽԻՍՏ ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ,

ԱԶԴԵՐ

ԲԱՐԻՉԻ ՀԱՅԵՐՈՒՆ

ՀԱՄԱՐ

ՀԱՅ ՃԱՇԱՐԱՆ, ուր կը պատ-
րաստուին զանազան արևելեան կերա-
կուրներ, խիստ չափաւոր գիներով:
Նորեկ ու անցորդ ճամբորդներու կը
հայթայթուի ամեն կերպ դիւրութիւն:

9. R. Buffault, 9.

près Faubourg Montmartre, Paris

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՃԱՇԱՐԱՆ

Մէնչիյէյի հրապարակը, Բասաժ
Բրէնս Սէյֆէտտին պէյ, թիւ 50 իւ-
նութը:

Ամեն տեսակ արևելեան կերա-
կուրներ, և անուշեղէններ, մասնաւո-
րաբար Տէօնէր եւ Շիշֆէպապի:

Այս ճաշարանի վարիչներն են
Տեարք Կարապետ Տիրհէմճեան
և Սարգիս Հիւսէյինճեան

Երիտասարդ մը, որ քաջ Անգլիագէտ
է, պատրաստ է մասնաւոր դասեր տալ անգ-
լերէնի, տուներու մէջ ալ, խիստ գոհացու-
ցիչ եւ դիւրամատչելի պայմաններով:

Փափագողները դիմեն Փիւնիկի խմբա-
գրութեան:

ԱՐՄԵՆԻԱ ԼԻՆՉԻ

Անգլիերէն հոյակապ երկին կա-
րևոր մասերուն ամփոփումը, հայերէնի
թարգմանում, գեղեցիկ հատոր մը,
157 էջերով, հեղինակին պատկերով
ու ինքնակենսագրութեամբ: Գրեց Պ.
Տոնայեսեան: Գինն է 3 ֆրանկ:

Դիմել:

Mr. Donabedian

177 Godolphin Road

Shepherd's Bush

London.W.

ՏՐ . ՍԱՐԳԻՍ Բ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

Ա. Արիկեան վիսյեալ բժիշկ

Սեսուսրիս փողոց թիւ 1

«Ծար ս'Այեֆսաների»ի սպարակիկ

վրայի Ա. յարկը

Տօգթէօր Սարգիս Բ. Ժամկոչեան
պատիւ ունի ծանուցանել Տեղիս ար-
դոյ հասարակութեան թէ՛ ինք հաս-
տատուած է վերջնապէս քաղաքիս մէջ
ու պատրաստ է դարմանելու ընդհա-
նուր հիւանդութիւններ: Մասնագի-
տօրէն ու Ամերիկայի կատարելագոր-
ծուած ու նորագոյն բժշկական փոր-
ձերով ու սխաղեմով կը բուժէ նանա-
ւանդ արեան վերաբերեալ զանազան
ախտերը:

Հիւանդները կ'ընդունի ա/են օր
կէս օրէն ետքը ժամը 2-5: Իսկ Չո-
րեքշաբթի և Շաբաթ օրերը առտուան
ժամը 9-11 ձրիաբար կը դարմանէ ի-
րեն դիմող աղքատ հիւանդները: